

«Հայաստանի զեղարուեստական արտադրութիւնները, մասնաւորապէս կաւէ ամանները, փոքրիկ գորգերն ալ, մեծ ընդունելութիւն կը գրտնէին եւ սուղ կը զնահատուէին ամբողջ Արարական աշխարհում»<sup>(54)</sup> :

Եւ զեռ մինչեւ հիմա այս երկիրներուն մէջ հայեր են որ գորգի տեսուերով կը զբաղին, զայն ներածելով Թուրքիայէն եւ Պարսկաստանէն: 1915ին Ուրֆայի մէջ (Մասման) միայն հայեր կ'աշխատէին Գերմանական գորգի գործարանին մէջ: Անկէ վերջ «Կեսարիայէն տարագրուած Հայեր Պէյրութի (Սիւրիոյ) մէջ գորգի գործարան մը հաստատելով՝ գործ առաջարկած են 400 չափահաս որբուհիներու»<sup>(55)</sup> : Թէ՛ Պէյրութ եւ թէ՛ Երուսաղէմ, անճնապէս զիտեմ, որ միայն հայեր էին գորգի վաճառականները: Որքան որ կը յիշեմ, կացութիւնը նոյն էր նաեւ Եգիպտոս, Աղեքսանդրիա եւ Գահիրէ:

Երբ օր մը Արարական հին գրականութիւնը հարկ եղածին պէս զիտնանք՝ բազմաթիւ նորութիւններ պիտի գան ամբողջացնելու մեր այս հատուկուոր տեղեկութիւնները:

#### ԱՐԵՒՄՏԵԱՆ ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ԵՒ ԹՈՒՐԳԻՈՅ ՄԷՁ

Միջնադարերուն եւ նոյնիսկ անկէ վերջ Եւրոպա եւ Ամերիկա ամբողջ արեւելեան գորգերուն անխտիր «Թրքական գորգ» յորջորջումը կու տար, հոգ չէ թէ անոնք բերուած ըլլային Պարսկաստանէն, Հայաստանէն կամ Կովկասէն: Այս սխալ կոչումին մասին քիչ վերջ պիտի խօսիմ:

Գալով նոյնիսկ Թուրքիոյ սահմաններուն մէջ շինուած գորգերուն, հին թէ աւելի նոր ժամանակներուն, արտադրութիւններն են այդ տիրահոնչակ կայսրութեան սահմաններուն մէջ ապրող բոլոր ժողովուրդներուն: Օտար գորգագիր մը այս մասին կը զրէ. «Թրքական գորգեր. — յորջորջումը իր մէջ կը պարունակէ այն գորգերը, որոնք արտադրուած են թրքական կայսրութեան սահմաններուն մէջ անխտիր, եթէ նոյնիսկ արտադրուած են Քիւրտերու, Չերքէզներու կամ Քրիստոնեաներու կողմէ, այս երեք անուններէն վերջնոյն մէջ կը հաշուին հայերը եւ սիւրիացիները»<sup>(56)</sup> :

Արար Իպն Պաթութա իր աշխարհագրութեան մէջ (1325–1353) մեղի կարգ մը հետաքրքրական ծանօթութիւններ կու տայ ատենուան Թուրքիոյ գորգերուն մասին: Խօսելով Ատալիայի (Փոքր Ասիա) մէջ

<sup>(54)</sup> «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, շարթաթերթ, թիւ 46, էջ 727, Ստեփանի յօդուած: Ինչ ինչ մանրամասնութիւններ տեսնել իմ «Հայ եւ Արար զեղարուեստական յարաբերութիւնը», «Անահիտ», Փարիզ, 1932, թիւ 1–2: Ասկէց ալ զբոյժով արատուրուած:

<sup>(55)</sup> «Ժողով. Չայն», օրաթերթ, Կ. Պոլիս: Արտադրուած «Բազմապէս», 1928, թիւ 3, Բ. կողմ, էջ Ա:

<sup>(56)</sup> Rugs. — by Rosa Belle Holt, 1927, Chicago, p. 71.